Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ղեկավար Ա. Կամավոսյան

2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն

18.01.2019թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ղեկավար Ա. Կամավոսյանը ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> և այլ ՀՀ օրենքներով, համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2018 թվականի ընթացքում Արագածի համայնքապետարանի հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2018 թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել են որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացվում են Ձեզ:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում որպես պարտադիր լիազորություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը բոլոր բնագավառներում:

Կազմակերպվել է թվով 210 քաղաքացիների ընդունելություն, հատկացվել է 685 տարբեր բնույթի և բովանդակության տեղեկանքներ, 11 բնակչի հատկացվել է բնութագիր, ընթացք է ստացված բոլոր դիմումներին, որոնցից շատերին հատկացվել է դրամական օգնություն: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվել է միջոցներ տարերային աղետները վերացնելու ուղղությամբ՝

համայնքում տեղադրված երկու հակակարկտային կայանների գործարկման միջոցով:

Հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել 2018թվականի ընթացքում համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները, ինչպես նաև եռամսյակային կատարողականները:

2018թվականին հավաքագրված եկամուտներ

	Պլանային	Փաստացի	Տոկոսային
Հողի հարկի հավաքագրում	11.900.0	6099.0	50%
Գույքահարկ փոխադրամիջոցներից	7850.0	4215.0	53.7%
Գույքահարկ շենք շինություններից	310.0	421.7	136 %
Տեղական տուրքեր	240.0	240.0	100%
Հողի հարկի վարձակալական վճար	307.1	307.1	100%
Բյուջեի համահարթեցման դոտացիա	38964.2	38964.2	100%
Տեղական վճար	9207.1	7157.5	77%
Ընդամենը	68778.2	57234.4	83%

2018թվականին ընթացքում կատարված ծախսեր

	Փաստացի
Աշխատավարձ	23284.5
Էներգիայի և գազի ծառայություն	4011.2
Կապի ծառայություն	84.0
Համակարգչային ծառայություն	196.2
Ընդհանուր բնույթի այլ	586.0
Գրասենյակային նյութեր	570.8
Սոցիալական օգնություն	2370.6
Մասնագիտական ծառայություն	801.7
Բուժ- ամբուլատորիայի գազի ծախսեր	200.0
Վարչական սարքավորումներ մանկապարտեզի համար	2320.3
Մշակույթի աշխատավարձ	4539.8
Երիտասարդական միջոցներ	700.0
Կրթություն	19633.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	764.3
Աղբահանություն	4261.0
Լուսավորություն	994.0
Նախագծահետազոտական ծախսեր	996.0
Ավտոմեքենայի ապահովագրություն	40.0
Ներկայացուցչական ծախսեր	852.0

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել նաև քաղպաշտպանության մարմինների գործունեության, զինծառայողների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը : Էջմիածնի զինկոմիսարիատ է ներկայացվել համայնքում հաշվառված , սակայն կոմիսարիատում հաշվառման չկանգնած զինպարտների վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ համայնքի զինպարտների գրանցամատյանում կատարված գրանցումների հիման վրա:

Սահմանված կարգով ներկայացվել է կցագրման ենթակա 2002 թվականին ծնված պատանիների անվանացուցակը: Հաստատվել է բնակչության քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես նաև կազմակերպվել և անցկացվել է ուսումնավարժություն <<ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի չորս զինակոչիկ ընդգրկվել են սովորելու <<Հայաստանի ԴՈՍԱԱՖ>> ավտոդպրոցում և նրանց տրվել է անվճար երթևեկության հնարավորություն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել համայնքի շենքերի ու շինությունների նպատակային օգտագործմանը և պահպանմանը, տրամադրվել է նոր հասցեներ: Կազմակերպվել էհամայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը, տնկվել են բազմերանգ վարդեր: Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները: Աղբահանությունն իրականացվել է շաբաթը երկու օր: Համայնքապետարանի երկու բանվորների կողմից կատարվել է համայնքի առուների, գերեզմանների, հուշարձանների մաքրման աշխատանքներ: 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է 4 շաբաթօրյակ, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպությունների աշխատակիցների հետ միասին, մասնակցել է ավելի քան 120 մարդ:

Համայնքի ղեկավարի կողմից ապահովվել է համայնքի գիշերային լուսավորությունը, փոխվել են անսարք , տեղադրվել են նոր էկոնոմ լամպեր, գիշերային լամպեր են վառվում համայնքի բոլոր փողոցների խաչմերուկներում: Իրականացվել են համայնքի մոտ 17 փողոցների փոսալցման ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ: Կազմակերպվել է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները : Համայնքում ընտանիքի անդամին կորցրած յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է անվճար դիակառք և ծաղկեպսակ:

2018 թվականի ընթացքում լուծվեց համայնքի համար շատ կարևոր և առաջնային խնդիրներից մեկը: 2018 թվականին Արագած համայնքը մասնակցեց ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին, ներկայացվեց <<Արագած համայնքի հանդիսությունների սրահի կահավորման համար գույքի և էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման>> հայտ, որը արժանացավ հավանության և Արագած համայնքի բյուջեի ու ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի 1496-Ն որոշմամբ հատկացված գումարի շնորհիվ ի կատար ածվեց:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ: Օրենքով սահմանված կարգով հատկացվել են որոշումներ հողամասի և շինության նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու վերաբերյալ: :

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Կազմակերպվել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա: 2018 թվականի ընթացքում երեք անգամ գծանշվել է համայնքի ասֆալտապատ տարածքը, որի աշխատանքները իրականացրել են համայնքապետարանի աշխատակիցները: Համայնքում գործում է Արագած-Էջմիածին հասարակական տրանսպորտ, մեկ ժամվա հաճախականությամբ: Համայնքում գործում է ուսանողական ավտոբուս:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ: Մարտի 8-ին՝ կանանց միջազգային տոնի առթիվ Արագած համայնքի <<Մեխակ Մեխակյանի>> անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչներին, համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզի աշխատակիցներին, ինչպես նաև բժշկական ամբուլատորիայի աշխատակիցներին հատկացվել են ծաղիկներ, իսկ համայնքի ծերության և հիվանդության թոշակ ստացող կանանց հատկացվել է նվերներ: Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված կազմակերպվել է համայնքի դպրոցի աշակերտների կողմից, հարգանքի տուրք է մատուցվել Արագած համայնքում տեղակայված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի մոտ, այնուհետև համայնքի բնակչության մի մասը և համայնքապետարանի աշխատակազմը այցելել է <<Ծիծեռնակաբերդ>> իրենց հարգանքի տուրքը մատուցելու զոհերի հիշատակին: Մայիսի 9-ին

համայնքապետարանի աշխատակիցների, դպրոցի ուսուցիչների և աշակերտների, համայնքի բնակիչների մասնակցությամբ ծաղիկներ և ծաղկեպսակներ են դրվել Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան-կոթողի մոտ: Արագած համայնքի <<Մեխակ Մեխակյանի>> անվան միջնակարգ դպրոցի 2017-2018 ուսումնական տարվա շրջանավարտներին հատկացվել է յուրաքանչյուրին 5000/հինգ հազար/ ՀՀ դրամ գումար վերջին դասի կապակցությամբ: Համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը գործել է ողջ տարի, հաճախել են 90 երեխա : Մանկապարտեզ են հաճախում նաև հարևան համայնքների երեխաները: Հունիսի 1-ին երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել է կավճանկարչություն և փոքրիկները հյուրասիրվել են քաղցրավենիքներով ու համեղ թխվածքաբլիթներով: Համայնքում գործել է նաև գրադարանը, որը գտնվում է ոչ այնքան բարվոք վիճակում, սակայն ունի մոտ 300 ընթերցող:

2018 թվականի առաջին դասարան հաճախող երեխաներին համայնքի բյուջեի միջոցներով տրամադրվեցին գրենական պիտույքներ և դպրոցական պայուսակներ: 2018 թվականի ամանորի կապակցությամբ ճարճատուկ, իսկ մանուկների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու նպատակով հատկացվել է երկու հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ գումար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով, ծանր առողջական խնդիրներ ունեցող ընտանիքներին: Կիրառվել է հողի հարկի զծով արտոնություն համայնքի սոցիալապես անապահով թվով 46 ընտանիքի նկատմամբ 828320 /ութ հարյուր քսանութ հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամի չափով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղմթերքների իրացմանը: Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ: Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորությունների շրջանակում նպաստել է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործմանը, ինչի արդյունքում ունեցել ենք թարխունի, կարտոֆիլի, կաղամբի, եգիպտացորենի, ելակի առատ բերք: 2018 թվականին համայնքում ավելացել էր կարտոֆիլի և եգիպտացորենի ցանքատարածությունները: 2018 թվականի հունիսի 17-ին տեղացած կարկուտը բավականին վնաս էր պատճառել բերքին : Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է հացահատիկահավաք կոմբայնի տեղափոխում:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 83 որոշում՝ հասցե տալու, շենք -շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ, արձակվել է 19 կարգադրություն: Ավագանու գործունեությունը կազմակերպվել է հաստատված կանոնակարգի հիման վրա, կայացել է 12 նիստ, որի ժամանակ քննարկվել են համայնքի շահերին վերաբերվող հարցեր և կայացվել է 51 որոշում:

Հաստատվել են համայնքի 2018 թվականի բյուջեն և կատարված փոփոխությունները, սանիտարական մաքրման սխեման, քննարկվել և հաստատվել է համայնքի 2018 թվականի բերքի տակ բնակչության տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը, հողային հաշվեկշիռը և այլ հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի օգնությամբ իրականացվել են համայնքի միջնակարգ դպրոցի, բժշկական ամբուլատորիայի, համայնքի մանկապարտեզի արդյունավետ գործունեությունը, որոնք իրենց լիազորությունների սահմաններում բարեխիղճ և պարտաճանաչորեն սպասարկել են ազգաբնակչությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մշակույթի տան տանիքի հիմնանորոգում

2. Դպրոցի ջեռուցման համակարգի անցկացում

3.Սպորտ հրապարակի /դաշտի/ կառուցում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ ԱՐԱԳԱԾԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *04703564*

18.01.2019թ.

Արագած համայնք